

Էղիտա Գ. Գոյան  
Պալմ. զիր. թեկնածու

## ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԵՎ ԱԴՐԲԵԶԱՆԸ

Ազգերի լիգայի արխիվի (Ժնև, Շվեյցարիա) փաստաթղթերում\*

### Մուտք

Ղարաբադյան հիմնահարցը՝ որպես Առաջին համաշխարհային պատերազմից սկիզբ առած ապագադուրայնացման գործընթացների հետևանք, միջազգային ասպարեզում հայտնվեց 1918 թվականին՝ «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» շինծու անվանումով պետության ստեղծման հետ միասին:

Ղարաբադի 1918-1920 թթ. միջազգային-իրավական կարգավիճակը հստակորեն վկայում է այն մասին, որ «Ադրբեջան» նորագոյացության կարձատու անկախության շրջանում երկրամասը չի եղել վերջինիս իրավասության ներքո, այլ հանդիսացել է առանձին միավոր, քանզի միջազգային հանրությունը 1918-1920 թթ. Ղարաբադը դիտարկել է որպես վիճելի տարածք: Ու չնայած ներկայումս ադրբեջանական կողմը մշտապես մատնանշում է անզիյացիների 1919 թվականի որոշումը, որով երկրամասը ժամանակավորապես հանձնվել էր իր կառավարմանը<sup>1</sup>, նույն պատմաշրջանում միջազգային ատյանների ընդունած՝ իրավական ուժ ունեցող որոշումները վկայում են Ղարաբադի վիճելի կարգավիճակի մասին: Վյապես՝ 1920 թ. հունվարին Փարիզի խաղաղության կոնֆերանսում Պաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Խոտանիայի և ճապոնիայի կողմից Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունների դե ֆակտո ճանաչման մասին որոշման մեջ հստակորեն նշել էր, որ ճանաչումը չի ենթադրում սահմանների վերջնական ամրագրում, ինչը պետք է լուծվի հարեւան երկրների հետ փոխադարձ համաձայնությունների միջոցով<sup>2</sup>:

Դ (Ռ) պար, թիվ 3 (39) հունիս-սկսպինի, 2012

Վեմ համահայկական համրեն

\*Այս հետազոտությունը կատարվել է Երիտասարդ գիտաշխատողներին հատկացվող պետական դրամաշնորհի շրջանակներում՝ Շվեյցարիա գործուղման միջոցով: Խմբ.: Յողվածն ընդունվել է տպագրության 9.09.2012:

1 Տես <http://pergnum.rph/news/polit/1466476.html>, [www.aze.az/news\\_imya\\_sestra\\_imya\\_62668.html](http://www.aze.az/news_imya_sestra_imya_62668.html)Cached.

2 Տես Իմամիրեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկային (քննական տեսություն), Պեյրութ, տպ. Սեւան, 1964, էջ 202: Տես նաև՝ [en.wikipedia.org/wiki/Azerbaijan-Democratic\\_Republic](http://en.wikipedia.org/wiki/Azerbaijan-Democratic_Republic).

## 1. Ղարաբաղի հարցը որպես Ազգերի լիգային Ադրբեջանի անդամակցության մերժման պատճառ

Ղարաբաղի կարգավիճակի հանդեպ միջազգային հանրության իրավական դիրքորոշումը դրսնորվել է նաև Ազգերի լիգային Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության համատեքստում: Տվյալ պատմաշրջանում Ազգերի լիգայի կարևորությունը նրանում էր, որ այս մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած խոշորագույն միջազգային կազմակերպությունն էր: Համաձայն նրա հիմնադիրների՝ Ազգերի լիգան լինելու էր այն իրավական հարթակը, որը հաստատելու և իրավական ուժ էր տալու պետությունների գոյությանը և նրանց միջև առկա հարաբերություններին<sup>3</sup>: Ուստի հասկանալի էն Ազգերի լիգայի անդամ դառնալու նորաստեղծ պետությունների ձգտումները:

Հայաստանի Հանրապետությանը՝ որպես դաշնակից պետություն, ստորագրելով Ազգերի լիգայի Կանոնադրությունը, հավակնում էր մտնելու կազմակերպության անդամների նախնական ցուցակի մեջ, սակայն սկզբում՝ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի ճագառում, և ապա՝ Հայաստանի հանդեպ մանդաս սահմանելու մեծ տերությունների որոշումն անորոշ դարձրին Ազգերի լիգային անմիջապես անդամակցելու ՀՀ հնարավորությունները: Ուստի Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. սեպտեմբերի 25-ին<sup>4</sup> պաշտոնապես դիմում է Ազգերի լիգայի խորհրդին՝ անդամակցության խնդրանքով<sup>5</sup>:

Մինչդեռ, Ադրբեջանի կողմից անդամակցության դիմումնագիրը ներկայացվում է 1920 թ. նոյեմբերի 1-ին<sup>6</sup>, երբ այդ երկրում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում՝ 1920 թ. ապրիլի 28-ից Բարգում իշխանությունն անցել էր բոլշևիկների ձեռքը, որից հետո նուսավարական կառավարությունը կարճ ժամանակով հաստատվել էր Գանձակում (Գյանջա), իսկ այնուհետև տեղափոխվել արտասահման: Ազգերի լիգայի կողմից Ադրբեջանի Վտարանդիական իշխանությունների դիմումնագրի ընդունումը, ըստ Էռյան, անօրինական էր: Հավանաբար դա պայմանավորված էր նրանով, որ անդամ-պետությունները կասկածներ ունեին Բարգում բոլշևիկյան իշխանության ամրության և տևականության մեջ:

Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության դիմումները նախ հանձնվում են Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարին, որն իր դիտարկումներն է ներկայացնում թեկնածու երկրների վերաբերյալ: Ադրբեջանի վերաբերյալ իր զեկույցում Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարը շեշտել էր. «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, որն արտաքուստ (superficial) գրադեցնում է 40.000 թ/կմ տարածք (չնայած ադրբեջանցիները Ազգերի լիգային ուղղված իրենց դիմումնագրում նշել էն 94.137 թ/կմ<sup>7</sup>- Է.Գ.), նախկինում երբեք պետություն չի եղել, այլ ընդգրկված է եղել մոնղոլների և պարսիկների խմբերի մեջ, իսկ սկսած 1813 թվականից՝ Ռուսաստանյան կայսրության տարածքում: Ադրբեջան անոնը, որն ընտրվել է նորաստեղծ Ադրբեջանի համար, նույն է, ինչ հարևան Պարսկաստանի նույնանուն զավառի անվանումը»<sup>8</sup>:

3 Տե՛ս The League of Nations Starts, an outline by its organizers, London 1920, p. 134-135.

4 Ոչ պաշտոնական դիմումը եղել է 1920 թ. նոյեմբերի 13-ին:

5 Տե՛ս League of Nations Archive and Historical Collection Section (այսուհետև՝ LNA) Sec. 28, doc. 7094, dos. 4395.

6 Տե՛ս LNA, League of Nations Memorandum on the Application for the Admission of the Republic of Azerbaijan to the League of Nations.

7 Տե՛ս LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General, sec. 28, doc. 8856, dos. 8466.

8 Տե՛ս LNA, League of Nations Memorandum on the Application for the Admission of the Republic of Azerbaijan to the League of Nations.

Դիմումնագրի հետ կապված՝ Գլխավոր քարտուղարը մատնանշում էր նաև, որ Ազգերի լիգայի Կանոնադրության առաջին հոդվածի համատեքստում Աղբեջանը չի կարող դիմումը որպես դեյտրէ ինքնիշխան երևիր (ընդգծումը մերճ է- Է.Գ.), քանի որ այդպիսին չի ճանաչվել Ազգերի լիգայի և ոչ մի անդամի կողմից և ապա առանձնացնում էր հետևյալ իրավական դիմումները.

1. Աղբեջանի տարածքը, որը նախկինում կազմել է Ռուսաստանի մաս, թեև 1918 թ. հոչակել է իրեն որպես անկախ պետություն և 1920 թ. հունվարին նրա կառավարությունը դե ֆակտո ճանաչվել է Դաշնակիցների կողմից, սակայն Կանոնադրության 1-ին հոդվածով Աղբեջանի՝ դեյտրէ «ինքնիշխան երևիր» լինելու հանգամանքը կասկածների առիթ է տալիս: Իսկ դե ֆակտո Աղբեջանի կառավարությունը ճանաչվել է միայն Սևծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ճապոնիայի կողմից, ընդ որում՝ ԱՄՆ-ը դեմ է Աղբեջանի ճանաչմանը<sup>9</sup>:
2. Եթե նույնիսկ Ազգերի լիգան ընդունի Աղբեջանի ինքնիշխանությունը, հարց է ծագում, թե արդյո՞ք աղբեջանական պատվիրակությունը մանդատ ունի ներկայացնելու նրա օրինական իշխանությանը և արդյո՞ք այդ կառավարությունը կարող է ստանձնել միջազգային պարտավորություններ և տալ համապատասխան երաշխիքներ<sup>10</sup>:

Վերլուծելով Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարի իրավական դիմումները Աղբեջանի ինքնիշխանության հետ կապված՝ հիշեցնենք, որ դե ֆակտո ճանաչումը տրվել էր Աղբեջանի մուսավարական կառավարությանը, այլ ոչ թե պետությանը, և, քաղի այդ, առկախ էր բողնվել նաև պետության սահմանների հարցը: Միաժամանակ, Դաշնակից պետությունների կողմից Աղբեջանի դե ֆակտո ճանաչվելու հանգամանքը բացատրվում էր ոչ թե նրանվ, որ Աղբեջանը դիմումը էր որպես անկախ պետություն, քանզի չուներ անկախության որևէ պատմական կամ իրավական հիմք, այլ ուղղակի նպատակ էր դրվում կանխել բոլշևիկների կողմից Կովկասի գրավումը և անվտանգության շղթա ստեղծել Խորհրդային Ռուսաստանի և Արևմուտքի միջև<sup>11</sup>:

Միաժամանակ նշենք, որ «Աղբեջանի Դեմոկրատական Հանրապետություն» անունը կրող պետությունը դեյտրէ ճանաչված չէր և ոչ մի պետության կողմից, իսկ ԱՄՆ-ը դեմ էր Աղբեջանի նույնիսկ դե ֆակտո ճանաչմանը<sup>12</sup>, քանի որ նախագահ Վ.Վիլսոնը այն կարծիքին էր, որ Աղբեջանի անկախությունը նպատակահարմար չէ ճանաչել<sup>13</sup>: Արդյունքում՝ ԱՄՆ-ը անգամ չեղյալ էր հայտարարել 1920 թ. հունվարին Դաշնակից պետությունների կողմից Աղբեջանի դե ֆակտո ճանաչմանն իր համաձայնությունը<sup>14</sup>: Պատճառն այն է, որ, Վ. Վիլսոնի կարծիքով, նախկին ցարական Ռուսաստանի մասը կազմած նորանկախ պետությունները հանդիսում են ռուսական խնդրի (ընդգծումը մերճ է- Է.Գ.) բաղկացուցիչը և չպետք է անկախանան, բացառությամբ Լեհաստանի, Ֆինլանդիայի և

baian to the League of Nations.

9 Այսօն աղբեջանական պատմագրությունը հարցն այնպես է ներկայացնում, թե իբրև ԱՄՆ նախագահ Վիլսոնը մեծ ջամփեր է գործադրել Աղբեջանի Դեմոկրատական Հանրապետության անկախության ճանաչման ուղղությամբ: Տես <http://karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap045-6.php>:

10 Տես LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General, Sec. 28, doc. 8466, dos. 8466.

11 Տես Cornell, Svante E., Azerbaijan Since Independence, Armonk, NY, USA, M.E. Sharpe, Inc., p. 28, Sicker M., Middle east in the 20th Century, p. 121.

12 Տես Sicker, M., Middle East in the Twentieth Century, Greenwood Press, Westport, CT, USA, p. 123.

13 Տես Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia, New York, 1959, p 266.

14 Տես LNA, sec. 11, dos. 5343, doc. 7653.

## Հայաստանի<sup>15</sup>:

Անդրադառնալով երկրի ինքնիշխանության տեսակետից մյուս կարևոր հանգամանքը հանդիսացող՝ ներքին կյանքի կազմակերպվածության հարցին, նշենք, որ այն ևս Աղբեջանում հստակ չէր: Ըստ Ազգերի լիգայի կողմից 1920-ին Ալանյան կղզիների հարցով նշանակված Իրավաբանների միջազգային հանձնաժողովի՝ «Իրավական առումով պետությունը լիովին ինքիշխան է, եթե քաղաքական առումով կայուն և կազմակերպված է, իսկ կառավարությունն իր իշխանությունը տարածում է պետության ողջ տարածքում առանց օտարերկրյա ուժերի օգնության»<sup>16</sup>: Մինչդեռ, ինչպես հետագայում իր բննարկումների ընթացքում մատնանշում էր Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովը, Աղբեջանը չոներ կայուն կառավարություն, հստակ սահմաններ, որի վրա կտարածվեր երկրի կառավարության իշխանությունը: Ավելին, դեռ 1918-ից դեռ ֆակտո, իսկ 1920 թ. ապրիլից դեռ յուրեւ երկրում առկա էր երկու իշխանություն՝ ի դեմս Գանձակում ապաստանած մուսավարական (Վերջինս կարծ ժամանակ անց տեղափոխվեց արտասահման) և Բաքվում գտնվող բոլշևիկյան կառավարությունների<sup>17</sup>, ինչը նշված էր նաև Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարի գեկույցում<sup>18</sup>: Ի դեպ, երկու կառավարություններն էլ պնդում էին Աղբեջանի վրա իրենց իրավական իշխանությունը: Ներքին կյանքի կազմակերպվածության տեսանկյունից նշենք նաև այն հանգամանքը, որ երկրում մեծ ազդեցություն ունեին բոլքերը, որոնց օգնությամբ աղբեջանական-մուսավարական կառավարությունը բազմից փորձել էր վերականգնել իր իշխանությունը (1918 թ. մուսավարականները միայն բոլքերի օգնությամբ կարողացան գրավել Բաքվուն): Դա է պատճառը, որ անդրադառնալով Աղբեջանում թուրքական ազդեցությանը՝ որոշ պատմարաններ արդարացիորեն կասկածի տակ են դնում մուսավարական կառավարության ուժն ու ազդեցությունը Աղբեջանի տարածքում<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության անդամակցությանը, ապա Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարի գեկույցի համաձայն՝ Հայաստանը բավարարում էր Ազգերի լիգայի Կանոնադրության պահանջներին, պետությունը լիովին ձևավորված էր և ճանաչված գլխավոր դաշնակիցների և այլ կառավարությունների կողմից, իսկ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով գլխավոր դաշնակից տերությունները ճանաչել էին Հայաստանը նաև դեռ յուրեւ որպես ինքնիշխան և անկախ երկիր<sup>20</sup>: Հատկանշական է, որ Ազգերի լիգայի Քարտուղարության քաղաքական բաժինը ևս Սևրի պայմանագրի ստորագրումը որակել էր որպես Հայաստանի Հանրապետության դե ֆակտո և դեռ ճանաչման փաստ<sup>21</sup>:

Անդամության համար ստացված դիմումները շուտով ներկայացվում են Ազգերի լիգայի Ռազմական, օդային և նավատորմի հարցերով մշտական խորհրդականին:

15 Stéu The United States, Poland and Russia, Advocate of peace through justice, vol. 82, N 9/10 (September-October, 1920), p. 319.

16 Stéu LNA, Report of the International Committee of Jurists entrusted by the Council of the League of Nations with the task of giving an advisory opinion upon the legal aspects of Aaland Islands question. League of Nations Official Journal, Special Supp. N 3 (1920).

17 Stéu Suny R., The Baku Commune, 1917-1918, New Jersey Princeton University Press, 1972, p. 231.

18 Stéu LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General, sec. 28, doc. 8856, dos. 8466.

19 Stéu Hill Ch., State-building and conflict resolution in the Caucasus. Leiden, Boston: 2010, p. 177-178: Stéu նաև Պ. Կմազյան, Աղբեջանի Ղենոկարտական Հանրապետության Կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 26-35:

20 Stéu Hovannissian R., The Republic of Armenia, Volume IV (between Crescent and Sickle: Partition and Sovietization), London, University of California Press, 1996, p. 328:

21 Stéu ՅՕ. Բարսեղով, Հեղուած արման: Օգուածություն և պատասխանատվություն Հայաստանի հանրապետության դեմք առ Թուրքիայի կողմէ, Մոսկվա, 2002, տ. 1, ս. 531.

դատվական հանձնաժողով<sup>22</sup>, որը գրադիւն էր անդամակցության հայտ ներկայացրած պետությունների սպառազինությունների կրծատման հարցերով՝ որպես անդամակցության նախապայմաններից մեկը<sup>23</sup>: Վերջինս Հայաստանի վերաբերյալ իր եղրակացության մեջ ընդունում էր մեծաքանակ զորք և զինամթերք պահելու անհրաժեշտությունը՝ որպես հիմք ընդգծելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական պայմաններն ու քաղաքական ծանր վիճակը<sup>24</sup>, ինչպես նաև՝ շրջապատի թշնամիների առկայությունը<sup>25</sup>: Սա բավական հետարքիր և արժեքավոր որոշում էր, քանի որ հանձնաժողովը, փաստորեն, ճանաչում էր հարկանի ներից պաշտպանվելու Հայաստանի իրավունքի օրինականությունը՝ հակառակ սպառազինությունների կրծատման վերաբերյալ կազմակերպության որդեգրած դիրքորոշման:

Անդամության թեկնածությունների քննության համար նշանակված Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովը յուրաքանչյուր պետության անդամակցության հարցը պետք է ուսումնասիրեր հետևյալ տեսանկյուններից. արդյո՞ք անդամության հայտը ներկայացրած երկրի կառավարությունը (որևէ ֆալստո՞ք, թե՞ որևէ յուրեւ), արդյո՞ք թեկնածու երկիրը ունի հստակ սահմաններ և կայուն կառավարություն, որը ներկայացնում է ողջ թնակչությանը, արդյո՞ք երկիրը կառավարվում է ազատ, ինչպիսի՞ն է երկրի վերաբերմունքն իր ստանձնած միջազգային պարտավորությունների և զինուժի վերաբերյալ Ազգերի լիգայի պահանջների նկատմամբ:

Հանձնաժողովն իր աշխատանքները բաժանում է երեք ենթահանձնաժողովների միջն, որոնք անդամության հայտ ներկայացրած պետությունների վերաբերյալ իրենց գեկույցները ներկայացնում են 5-րդ հանձնաժողովի քննարկմանը: Հայաստանի և Աղրբեջանի հնարավոր անդամակցության վերաբերյալ ենթահանձնաժողովի գեկույցները (Հայաստանի և Աղրբեջանի դիմունները հանձնվել են երրորդ ենթահանձնաժողովին, որի նախագահն էր Ֆրիտյոֆ Նանսենը) Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովին ներկայացվեցին 1920 թ. դեկտեմբերի 1-ին: Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ գեկույցը դրական էր. երկիրը համապատասխանում էր առաջարված պայմաններին, քանի «Կասկած չկա, որ կառավարությունը ներկայացնում է հայ ժողովրդին՝ չնայած կայուն համարվել չի կարող»<sup>26</sup>:

Սահմանների վերաբերյալ գեկույցն անդրադառն էր միայն Արևմտյան Հայաստանի տարածքներին՝ չխոսելով նյուտ հարկանների հետ առկա վեճերի մասին (ինչն, ի դեպ, իշխատակով էր Աղրբեջանի վերաբերյալ ենթահանձնաժողովի գեկույցում): Այնուհետև նշվում էր, որ «Հայաստանի սահմանները թեև հստակորեն ամրագրված չեն, սակայն Ասրի պայմանագրի 52-րդ հոդվածն արթիտրած է ենթադրում, և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն ընդունել է միջնորդի դերը»<sup>27</sup>: Ինչ վերաբերում էր երկրի միջազգային ճանաչմանը, ապա ԱՄՆ-ը, Արգենտինան և Բրազիլիան դեռ յուրեւ ճանաչել են ՀՀ-ը<sup>28</sup>:

22 Տե՛ս The League of Nations starts, an outline by its organizers, p. 134-135.

23 Տե՛ս Kohn G., The organization and the work of the League of Nations, Philadelphia 1924, p. 38.

24 Տե՛ս LNA, Minutes of the Commissions, "Military, naval and air conditions of the States which have asked to be admitted to the League of Nations", p. 107.

25 Տե՛ս Դայաստանի ազգային արխիվ (ԴԱԱ), ֆ. 200, գ. 2, գ. 93:

26 Տե՛ս LNA, Admission of New Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5<sup>th</sup> Committee to the Assembly.

27 Նույն տեղում, նաև՝ ԴԱԱ ֆ. 430, գ. 1, գ. 1227:

28 Տե՛ս LNA, Admission of New Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5<sup>th</sup> Committee to the Assembly.

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանը ներառված էր նաև Ազգերի լիգայի Կանոնադրությունը ստորագրած պետությունների ցուցակում, ստորագրել էր փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Ազգերի լիգայի պատրաստած փաստաթուղթը (1920 թ. օգոստոսի 10-ին՝ Սկրի պայմանագրի ստորագրման օրը), որի նախարանը հստակորեն ընդգծում էր, որ գլխավոր դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանը որպես **ինքնիշխան և անկախ պետություն**<sup>29</sup>: Ուստի Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովի 1920 թ. դեկտեմբերի 1-ի նիստի ընթացքում անդամ-պետությունների գրեթե բոլոր ներկայացուցիչները կողմ են արտահայտվում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը՝ չնայած հարցի վերաբերյալ վերջնական որոշում չի ընդունվում<sup>30</sup>:

Ինչ վերաբերում է Աղրբեջանին, ապա վերջինիս վերաբերյալ ենրահանձնաժողովի գեկույցը, որը նույն օրը ներկայացվել էր 5-րդ հանձնաժողովին, ընդգծում էր հարևան Հայաստանի և Վրաստանի հետ սահմանային վեճերի առկայությունը<sup>31</sup> (ինչն, ինչպես արդեն նշվեց, Հայաստանի դեպքում մատնանշված չէր<sup>32</sup>) և հստակորեն բացասական բովանդակություն ուներ: 5-րդ հանձնաժողովի քննարկումների ժամանակ մասնավորապես արձանագրվում է այն փաստը, որ հնարավոր չէ հստակորեն որոշել աղրբեջանական կառավարության վերահսկողության տակ գտնվող տարածքները, քանի որ երկրում երկիշխանություն է: Նիստի ժամանակ բարձրացված հաջորդ հարցը վիճելի տարածքների առկայությունն էր հարևան երկրների հետ, որի հետևանքով անհնար էր որոշակիացնել Աղրբեջանի սահմանները: Քննարկումների արդյունքում 5-րդ հանձնաժողովը եզրակացնում է, որ Աղրբեջանը չի բավարարում Ազգերի լիգայի Կանոնադրության պահանջներին. չունի հստակ սահմաններ, ինքնիշխան կառավարություն և դե յուրէ չի ճանաչվել Ազգերի լիգայի և ոչ մի անդամ-պետության կողմից<sup>33</sup>: Փասորուն՝ Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովը «Աղրբեջանի Դեմքրատական Հանրապետության» անդամակցության անհնարինությունը պայմանավորում էր այն հանգամանքով, որ երկրի կառավարությունը կայուն չէ, երկրի սահմանները չեն, և Աղրբեջանը տարածքային վեճեր ունի հարևան երկրների հետ<sup>34</sup>:

Արյունքում հանձնաժողովը բացասական կարծիք տվեց Աղրբեջանի ընդունելության դիմումին<sup>35</sup>: «Թեև Աղրբեջանի դիմումնագիրը ֆորմալ առումով ճիշտ է, դժվար է հստակեցնել այն տարածքները, որոնց վրա տարածվում է Աղրբեջանի կառավարության իշխանությունը: Տարածքային վեճերը հարևան երկրների հետ բույլ չեն տալիս հստակորեն որոշել Աղրբեջանի սահմանները: Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ ստեղծված պայմաններում կազմակերպության կանոնադրությունը թույլ չի տալիս Աղրբեջանի անդամակցությունը Ազգերի լիգային»<sup>36</sup>, - ասված էր Աղրբեջանի համար 1920 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված 5-րդ հանձնաժողովի բանաձիր մեջ: Մրանով Ազգերի լիգան ոչ միայն կրկին ամրագրեց Պարաբաղի վիճելի կարգավիճակը, այլև հենց այդ հիմնահարցը հիմք հանդիսացավ Աղրբեջանի անդամակցության մերժման համար:

29 Տե՛ս Հայրենիք ամսագիր, Պոսրըն N 2, 1933թ., էջ 64-65: Տե՛ս նաև՝ **IO. Барсегов**, նշվ. աշխատ., էջ 595: 30 Տե՛ս **IO. Барсегов**, նշվ. աշխատ., էջ 595:

31 Տե՛ս LNA, Admission of the new members to the League of Nations, Azerbaijan, Report presented by the 5<sup>th</sup> Committee to the Assembly, Class. 28, doc. 9410, doss. 8466.

32 Տե՛ս LNA, League of Nations, the Records of the First Assembly, Meetings of the Committees, Geneva 1920, pp. 218-219.

33 Տե՛ս ՐԱԱ, ֆ. 430, գ. 1, գ. 1218:

34 Տե՛ս LNA, Fourth Meeting of the 5<sup>th</sup> Committee, held on December 1, 1920, pp. 173-174.

35 Նույն տեղովում:

36 Տե՛ս LNA, Journal of the First Assembly of the League of Nations, Geneva 1920, p. 139.

## 2. Աղբեջանի պատվիրակության դեկավար Ալի Մարդան Ծոփչիբաշևի արձագանքը

Ներկայումս աղբեջանական կողմը Ազգերի լիգային Աղբեջանի անդամակցության մերժման բացատրությունները փորձում է հիմնել Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարի վերոնշյալ հուշագրում առանձնացված իրավական դիտարկումների վրա, որտեղ իր՝ ոչ թե «վիճելի տարածքների» խնդիրն է դիտվում որպես անդամակցության մերժման հիմք<sup>37</sup>, այլ բացառապես կառավարության ինքնիշխան չինելու հանգամանքը<sup>38</sup>:

Վերևում բերված մեջբերումը ինքնին վկայում է, որ Աղբեջանի ինքնիշխանության փաստի հանդեպ 5-րդ հանձնաժողովի կասկածների հիմքում ընկած էր նաև «վիճելի տարածքների» խնդիրը, թես կոնկրետ չեր նշվում, թե ո՞ր տարածքների մասին է խոսքը: Սակայն, քանի որ նման հնարանքը միտված է «հիմնավորելու» այն դրույթը, թե իր՝ Ղարաբաղը 1918-1920 թթ. վիճելի տարածք չի եղել, մեջբերենք հենց աղբեջանական աղբյուները, որոնք ևս փաստում են ճիշտ հակառակ իրողության մասին: Որպես ապացույց վկայաբերենք Փարիզում Խաղաղության վեհաժողովում, Աղբեջանի խորհրդարանի նախագահի կարգավիճակով հանդես եկող, այդ երկրի պատվիրակության դեկավար Ալի Մարդան (ըստ աղբեջանական աղբյուների՝ Ալիմարդան թեկ) Թոփչիբաշկի 1920 թ. դեկտեմբերի 7-ի անմիջական նամակ-արձագանքը՝ ուղղված Ազգերի լիգայի Վեհաժողովի նախագահին: Այստեղ անդրադառնալով Աղբեջանի անդամակցության խնդրի քննությանը, Թոփչիբաշկը նախ՝ հստակորեն վկայաբերել է 5-րդ հանձնաժողովի կողմից ԱԴՀ անդամակցության մերժման վերը նշված հիմքերը. Աղբեջանի սահմանները, որոնց վրա տարածվում է մուսավարականների իշխանությունը, որոշակի չեն, իսկ հարևանների հետ առկա տարածքային վեճերի հետևանքով հստակ չեն նաև երկրի արտաքին սահմանները, ապա ներկայացրել է համապատասխան բացատրությունները<sup>39</sup>. Մրանով Աղբեջանի պաշտոնական ներկայացուցիչը պաշտոնապես խստովանել է, որ իր երկրի անդամակցության դիմումի մերժումը ոչ թե մեկ, այլ միանգամից երկու հիմքեր ունի:

Առաջին կետի վերաբերյալ աղբեջանական պատվիրակության պատասխան փաստարկները հիմնված էին բոլշևիկների կողմից Բարվի իշխանության զավթման անօրինականության հանգամանքի վրա, ուստի ծոփչիբաշկը օգնություն էր խնդրում Ազգերի լիգայից՝ բոլշևիկների դեմ պայքարելու համար: Իսկ ինչ վերաբերում էր հարևան երկրների հետ վիճելի տարածքներին, ապա աղբեջանական պատվիրակությունն Ազգերի լիգայի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո քաղաքական քարտեզի վրա չկան հստակ սահմաններ ունեցող նորաստեղծ պետություններ, ինչը, սակայն, չի կարող օգտագործվել պետությանը՝ իր տարածքի հանդեպ ինքնիշխան իրավունքներից զրկելու համար: Բացատրության մեջ նշվում էր. «Աղբեջանի Հանրապետությունը բոլոր ազրեսորներից իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով ստիպված էր ռազմական գործողությունների մեջ մտնել Վրաստանի հետ՝ Զարարալայի, իսկ Հայաստանի հետ՝

37 Տե՛ս Musayev T. F., From territorial claims to belligerent occupation: legal appraisal, [www.azconsulatela.org/news/tmusayev.pdf](http://www.azconsulatela.org/news/tmusayev.pdf), [www.aze.az/news\\_imya\\_sestra\\_imya\\_62668.html](http://www.aze.az/news_imya_sestra_imya_62668.html) Cached.

38 Տե՛ս [www.azembassy.nl/?options=content&id=19](http://www.azembassy.nl/?options=content&id=19), [www.azembassy.us/3/31.html](http://www.azembassy.us/3/31.html), [www.un.int/azerbaijan/historical\\_background.htm](http://www.un.int/azerbaijan/historical_background.htm)

39 Տե՛ս LNA, Sec. 28, dos. 8466, doc. 9440.

**Ղարաբաղի և Զանգեզուրի շրջանների համար:** Այս տարածքները կազմում են Ադրբեջանի մաս և կառավարվում են (sic) Ադրբեջանի կառավարության կողմից. **Ղարաբաղի ու Զանգեզուրը Ադրբեջանի դեկալարության են հանձնվել Կովկասում Գաշնակիցների նախկին ներկայացուցիչների կողմից:** Ամեն դեպքում, այս վեճերը վերաբերում են ոչ միայն Ադրբեջանին, այլ նաև հարևան երկրներին, ովքեր սկսել են վեճը»<sup>40</sup>: Այսուհետև նշվում էր. «Սակայն Ադրբեջանի Հանրապետությունը մշտակա այն կարծիքին է եղել, որ հարևան Վրաստանի և Հայաստանի հետ սահմանային վեճերը պետությունների ներքին գործն են, և կառավարությունները պետք է ճանապարհ գտնեն հարցը փոխադարձ գիշումներով լուծելու համար: Վիճելի հարցը փոխադարձ համաձայնությամբ լուծելու դեպքում, Ադրբեջանի պատվիրակությունը կասկած չունի, որ Անդրկովկասյան երեք հանրապետությունները կդիմեն Ազգերի լիգային»<sup>41</sup>:

Այսպիսով՝ ներկայումս ադրբեջանական կողմից հնչող այն պնդումները, թե 1918-1920 թթ. տարածքային վեճերը ազդեցություն չեն ունեցել Ազգերի լիգային Ադրբեջանի անդամակցության հարցում, երբ վում են հենց իր՝ Ազգերի լիգայում ադրբեջանական պատվիրակության տվյալներով: Բացի այդ, Թոփշիրաշևի նամակը հստակորեն վկայում է, որ 1920-ին Ադրբեջանն ինքը Ղարաբաղի կարգավիճակը դիտում էր որպես վիճելի հարց, ուստի պատրաստակամություն էր հայտնում դիմելու Ազգերի լիգայի արքիտրաժին:

### Եզրակացություններ

Այսպիսով՝ 1918-1920 թթ. Ղարաբաղը չի եղել «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն» անունը կրող նորագոյացության կազմում, ինչը հստակորեն մատնանշվել է ինչպես այդ երկրի դե ֆակտո ճանաչման ընթացում, այնպես էլ Ազգերի լիգային անդամակցելու մերժման հիմնավորումների մեջ: Ուստի ադրբեջանական կողմի ներկա պնդումները՝ անզիհացի գեներալ Թոմանի կողմից լրացնված՝ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու վերաբերյալ որոշման և նրան Ղարաբաղի հայության համագումարի 1919 թ. օգոստոսյան համաձայնության վերաբերյալ չեն դիմանում որևէ քննադատության: **Նախ**՝ ակնհայտ է, որ այդ որոշումները ժամանակավոր բռնյա էին կրում՝ մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսից սպասվող իրավական վճռահատումը<sup>42</sup>: **Երրորդ**՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսում՝ 1920 թ. հունվարին Ադրբեջանի կառավարությունը ճանաչվեց առանց իր սահմանների վերջնական որոշման, այսինքն՝ Ղարաբաղը կրկին մնաց որպես վիճելի տարածք: **Երրորդ**՝ Ազգերի լիգային Ադրբեջանի անդամակցության մերժման համար հիմք հանդիսացան միանգամից երկու փաստարկներ՝ ա) 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի՝ որպես պետության ինքնիշխան շինելու ակնհայտ իրողությունը և թթ.) Հայաստանի Հանրապետության հետ՝ Ղարաբաղի, իսկ Վրաստանի հետ՝ Զարաբաղյի վիճելի տարածքների առկայությունը, հանգամանքներ, որոնք, ի տարբերություն ադրբեջանական ներկա պատմաշինարարների, ժամանակին չի երբեք անգամ խաղաղության վեհաժողովում այդ երկրի պատվիրակության դեկալար, Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Ալի Մարդան Թոփշիրաշևը՝ Ազգերի լիգայի Վեհաժողովի նախագահին ուղղված 1920 թ. դեկտեմբերի 7-ի պաշ-

40 Նորից հիշեցնենք, որ ոչ Հայաստանի և ոչ էլ Վրաստանի անդամության դիմումների քննարկումների ժամանակ Ադրբեջանի հետ վիճելի տարածքների մասին խոսք չի եղել:

41 Տե՛ս LNA, Sec. 28, dos. 8466, doc. 9440.

42 Տե՛ս Heiko Krüger, The Nagorno-Karabakh Conflict: A Legal Analysis, Springer 2010, p.13.

տոնական նամակում: Այս ամենը հստակորեն ապացուցվում է ներքևում մեր կողմից ներկայացվող երեք փաստարդերի միջոցով, որոնց ֆուռպատճենները ձևոր ենք բերել Ընկեցարիայի Ժնև քաղաքում գտնվող Ազգերի լիգայի արխիվից (The League of Nations Archives and Historical Collection Section (LNA), Geneva, Switzerland).

Ֆուռպատճեն 1. Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովի որոշումները Հայաստանի Հանրապետության և Ադրբեյջանի Դեմկրատական Հանրապետության անդամակցության վերաբերյալ (Journal of the First Assembly of the League of nations, Geneva 1920, p. 139)

le membres ordinaires et de quelle manière cela pourrait être. Cette proposition a été adoptée à l'unanimité par la Commission.

*a-Rica.* La Commission a reconnu que la demande de Costa-Rica était régulière, que son gouvernement était stable et que la souveraineté de cet Etat était reconnue par 12 Etats membres de la Société et par les Etats-Unis. La Commission s'est prononcée unanimement en faveur de l'admission dans la Société.

*Azerbaïdjan.* La Commission a estimé, bien que la demande d'Azerbaïdjan fut régulière, qu'il était difficile de déterminer les exactes limites dans lesquelles le Gouvernement de cet Etat exerce son autorité. Les querelles de frontières avec les voisins ne permettent pas de délimiter avec précision les frontières de l'Azerbaïdjan. La Commission a décidé que les dispositions du Pacte ne permettent pas d'admettre l'Azerbaïdjan dans la Société dans les instances actuelles.

*Ukraine.* La Commission a pris la même décision à l'égard de l'Ukraine, dont les frontières ne sont pas déterminées et dont le Gouvernement n'est pas jugé suffisamment stable, et a donc reconnu *de facto* que par la Pologne, la Finlande et la Suède.

*ménie.* La Sous-Commission qui s'occupe de l'Arménie a voté unanimement en faveur de l'admission de ce pays dans la Société. Cette décision a été appuyée à la Commission par M. Octavio (Brésil), M. Viviani (France), M. Politis (Grèce) et Lord Robert Cecil (Afrique du Sud).

*Fisher* (Grande-Bretagne) demande si dans quelques cas il semblera pas être dans l'intérêt de l'Arménie d'être sous la protection d'une puissance mandataire. Ce sujet sera discuté plus longuement à une séance ultérieure.

their small size could not be admitted to the League as ordinary Members. This proposal was adopted unanimously by the Committee.

*Costa Rica.* The Committee recognised that the request of Costa Rica to be admitted to the League was in order, that the Government of Costa Rica was stable and the sovereignty of the State of Costa Rica was absolute. The Government of Costa Rica had been recognised *de jure* by 12 States Members of the League and by the United States. The Committee decided unanimously in favour of her admission to the League.

*Azerbaïdjan.* The Committee decided that, though the request of Azerbaijan to be admitted was in order, it was difficult to ascertain the exact limits of the territory within which the Government of Azerbaijan exercised its authority. Frontier disputes with the neighbouring States did not permit of an exact definition of the boundaries of Azerbaijan. The Committee decided that the provisions of the Covenant did not allow of the admission of Azerbaijan to the League under present circumstances.

*Ukraine.* A similar decision was taken by the Committee with regard to the Ukraine. The Committee noted that the frontiers of the Ukraine were not determined, and felt that its Government was not sufficiently stable. This Government had been recognised *de facto* only by Poland, Finland, and Latvia.

*Armenia.* The Sub-Committee dealing with Armenia reported unanimously in favour of her admission. This conclusion was supported in the main Committee by M. Octavio (Brazil), M. Viviani (France), M. Politis (Greece) and Lord Robert Cecil (South Africa).

Mr. FISHER asked whether in a few months' time it might not appear that the interests of Armenia would be best served by placing her under the protection of a Mandatory Power.

A further discussion on the subject was reserved for a later Session.

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ադրբեյջան — Հանձնաժողովի որոշեց, որ, չնայած անդամության վերաբերյալ Ադրբեյջանի դիմումը փորձական առողջություն չի ունի, սակայն դժվար է հստակեցնել այն ստարածքները, որոնց վրա տարածվում է Ադրբեյջանի կառավարության իշխանությունը:** Տարածքային վեճերը հարկանք երկրների հետ բույլ չեն տալիս հստակորեն որոշել Ադրբեյջանի սահմանները: Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ ստեղծված պայմաններում կազմակերպության կանոնադրությունը բույլ չի տալիս Ադրբեյջանի անդամակցությունը Ազգերի լիգային:

**Հայաստան — Հայաստանի գործով ենթահանձնաժողովը միաձայն համեմատ եկավ վերջինիս անդամակցության օգտին:** Այս եզրակացությունը աջակցություն ստացավ նաև զլատակոր հանձնաժողովի կողմից՝ պրակտիկա պահանջական պահանջական հանձնաժողովում կազմակերպության կանոնադրությունը բույլ չի տալիս Ադրբեյջանի անդամակցությունը:

**Պրճ. Ֆիշեր (Սեծ Բրիտանիա)<sup>43</sup>** հարց է քարձրացնում, թե արդյո՞ք մի քանի ամիս անց պարզ չի դառնա, որ Հայաստանին ավելի շահեկան է մանդատային պետության խնամակալությունը<sup>44</sup>:

Հետագա քննարկումները տեղափոխում են հաջորդ նիստ:

43 Ընդգծումը հեղինակինն է:

44 Առաջին համաշխարհային պատերազմից հետո քննարկվում էր Հայաստանի մանդատը մեծ տերություններից մեկին հանձնելու խնդիրը:

Ֆուռապատճեն 2. Հասլված Փարիզի խաղաղության կոնֆերանսում Ադրբեյջանի Հանրապետության պատվիրակության նախագահի՝ Ազգերի լիգային ուղղված նամակից -League of Nations Archives and Historical Collection Section (LNA), Geneva, Switzerland.  
(Sec. 28, dos. 8466, doc. 9440)

LEAGUE OF NATIONS

Assembly  
Document

206

Letter from the President of the Peace Delegation  
of the Republic of Azerbaijan

*Note by the Secretary-General :*

The Secretary-General has the honour to forward herewith to the Members of the League of Nations the following letter dated the 7th December, which he has received from the President of the Azerbaijan Peace Delegation.

REPUBLIC OF AZERBAIJAN  
PEACE DELEGATION  
Hotel Touring-Balanc  
GENEVA

December 7th, 1920.

To His Excellency M. PAUL HYMANS,  
President of the First Assembly of the  
League of Nations, Geneva.

SIR,

At its Fourth Meeting, on December 1st, the Fifth Committee elected by the Assembly of the League of Nations arrived at the conclusion that it was impossible to admit the Republic of Azerbaijan to the League of Nations.

This conclusion, as will be seen from the Report contained in No. 17 of the *Journal*, page 139, is based upon the facts:

- (1) That it is difficult to determine precisely the extent of the territory over which the Government of this State exercises its authority.
- (2) That, owing to the disputes with neighbouring States concerning its frontiers, it is not possible to determine precisely the present frontiers of Azerbaijan.

The Committee decided that the provisions of the Covenant do not allow of Azerbaijan being admitted to the League of Nations under the present circumstances. Will you allow me, on behalf of the Delegation of the Republic of Azerbaijan, of which Delegation I am the President, to present to the Assembly of the League of Nations, through your intermediary, the following observations relating to the two arguments brought forward by the Fifth Committee.

The Committee, in the first place, refers to the difficulty of defining the frontiers of the territory over which the Government of Azerbaijan exercises its authority. The Delegation takes the liberty of pointing out to the Assembly of the League of Nations that the difficulty referred to by the Committee being only of a temporary and provisional nature, cannot and must not be considered to affect this question in any real or decisive sense. It is an undisputed fact that, until the invasion of the Russian Bolsheviks on April 28th, 1920, the legal Government of Azerbaijan exercised its authority over the entire territory of the Azerbaijani Republic, without exception, within the present boundaries as indicated in the map submitted to the Secretary-General of the League of Nations. After this invasion, part of the territory was occupied by the Bolsheviks; and with their Government at their head, the Azerbaijani people, concentrated in the town of Gandja, began a bloody struggle against the Bolsheviks, thanks to which, the latter gradually evacuated almost all the territory which they had occupied. At the present time, they hold only the town of Baku and surrounding districts, and occupy but a small part of the railway as far as the station of Adjikaboul. All the rest of Azerbaijan, including part of the districts of the provinces of Baku and Kouban, as well as all the districts of the former province of Elizabethpol, is in the hands of the Government of Azerbaijan, which has its headquarters in the town of Gandja, where there is also a section of the Parliament which was dispersed by the Bolsheviks, and part of the Army. This is equivalent to nine-tenths of the territory of Azerbaijan, within its present boundaries; and the Government of Gandja, which is the legal Government of Azerbaijan, is able to give sufficient guarantees that it will fulfil all its obligations of an international character, in conformity with the Covenant of the League of Nations. The Delegation makes bold to assure the Assembly of the League of Nations that the struggle carried on by the people of Azerbaijan, headed by their Government, against the Russian Bolsheviks, will be continued with unflagging energy until Baku and the surrounding districts are delivered from the invaders.

Our people will never come to terms with the Bolsheviks, whom they look upon as usurpers who must be swept away.

We may say in passing, that so obvious a peril as Bolshevism threatens not only Azerbaijan, but the whole of the Caucasus. It has overrun the whole of the Northern Caucasus and Kouban, as well as the bordering States of Armenia, which has just been declared a Soviet Republic.

The second objection raised by the Committee relates to disputes outstanding between Azerbaijan and the neighbouring States of Georgia and Armenia. With regard to this point, the Delegation has the honour to draw the attention of the Assembly to the fact that it is almost impossible to name a new State whose frontiers are absolutely undisputed. On the contrary, we see that not only new States, but even States which have been in existence for centuries, have had, and still have, frontier disputes; but these disputes do not cause them to be deprived of their sovereign rights over their own territory. The Republic of Azerbaijan, in defending the integrity of her territory against all aggressions is obliged to come into conflict with Georgia over the districts of Zakatal, and with Armenia over Karabagh and Zonghezur. These territories form part of Azerbaijan, and are administered by the Azerbaijani Government: the provinces of Karabagh and Zonghezur were left under administration of Azerbaijan by the decision of a former Allied representative in the Caucasus. In any case, these disputes concern not only Azerbaijan but also the neighbouring States which, on their part, have caused these disputes. But the Republic of Azerbaijan has always taken the view that these frontier disputes with the neighbouring Republics of Georgia and Armenia were only questions of domestic interest for the Republics concerned, and that the interested Governments would find a way of settling these disputes by mutual concessions. If, however, this hope should not be realised, and if the disputes cannot be settled on the spot, the Delegation of Azerbaijan has no doubt but that the three Trans-Caucasian Republics will apply to the League of Nations, as can be seen in the text printed by the Delegation of Azerbaijan in its political

memorandum (Republic of Azerbaijan, page 44) which was submitted to the Peace Conference in September, 1919, and also in the seventh point of the Notes which the Delegation presented, of November 25th, 1920 (Nº 697), to the Secretary-General of the League of Nations with reference to his memorandum Nº 108 upon the admission of the Azerbaijan Republic into the League of Nations. The Delegation firmly believes that, in spite of the aforesaid disputes which were thrust upon Azerbaijan, this country, so richly favoured by nature, will be able to guarantee the fulfilment of all the obligations of an international character which are imposed by the Covenant upon Members of the League of Nations.

The Delegation of Azerbaijan, on behalf of the vital interests of its country, which has twice suffered from the attacks of the Russian Bolsheviks, has the honour to declare to Members of the League of Nations that the admission of the Azerbaijan Republic to the League of Nations would furnish it with that moral support so urgently needed by our people in their struggle against the Bolsheviks — a people which alone, without any foreign aid, has been engaged, for more than six months, in a bloody struggle in order to save the independence of Azerbaijan.

In the hope that this appeal for moral support will attract the attention of the Honourable Representatives of the peoples taking part in the Assembly, I have the honour, on behalf of the Delegation of Azerbaijan, to beg you to be good enough to have the above statement read to the Assembly, at the time of the discussion of the above-mentioned conclusions of the Fifth Committee, with regard to the admission of the Azerbaijan Republic to the League of Nations.

I have the honour to be, etc.

*(Signed) M. ALLSOPTCASBACHEFF,  
President of the Peace Delegation  
of the Republic of Azerbaijan.*

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղրեջանի Հանրապետություն  
Խաղաղության Վեհաժողովի պատվիրակություն  
Հյուրանոց Touring-Balance  
Ժնև

Դեկտեմբերի 7, 1920 թ.

Նորին գերազանցություն պրն. Փոլ Հյումանին,  
Ազգերի լիգայի առաջին Վեհաժողովի նախագահ,  
Ժնև

Պրն.

Հինգերորդ համանաժողովը, որն ընտրվել էր Ազգերի լիգայի Վեհաժողովի կողմից, դեկտեմբերի 1-ի իր չորրորդ նիստում հանգեց այն եզրակացության, որ հնարավոր չէ ընդունել Աղրեջանի Հանրապետությանը որպես Ազգերի լիգայի անդամ:

Այս եզրակացությունը, ինչպես երևում է **ամսագրի** 17-րդ համարի 139-րդ էջից, հիմնված է հետևյալ փաստերի վրա.

Դժվար է հստակեցնել այն տարածքները, որոնց վրա տարածվում է Աղրեջանի կառավարության իշխանությունը:

Հարևան երկրների հետ առկա վեճերի հետևանքով հնարավոր չէ հստակորեն

որոշել Աղքադանի սահմանները:

Հանձնաժողովը որոշել էր, որ ստեղծված պայմաններում կազմակերպության (կանոնադրության) պահանջները թույլ չեն տալիս Աղքադանի անդամակցությունը Ազգերի լիգային: Թույլ տվեք Աղքադանի պատվիրակության անունից, որի նախագահը հանդիսանում եմ ես, հանձինս Զեզ Ազգերի լիգայի Վեհաժողովին ներկայացնել հետևյալ դիտարկումները՝ Հինգերորդ հանձնաժողովի ներկայաց- քած երկու փաստարկների վերաբերյալ:

\* \* \*

Հանձնաժողովի կողմից մատնանշված երկրորդ հիմքը<sup>45</sup> վերաբերում է Աղքադանի և հարևան Վրաստանի ու Հայաստանի հետ վեճերին: Այս փաստարկի հետ կապված՝ պատվիրակությունը ցանկանում է Վեհաժողովի ուղարկությունը իրավիրել այն հանգամանքի վրա, որ անհնար է մատնանշել որևէ նորաստեղծ պետություն, որի սահմանները բացարձակ անվիճելի են: Ընդհակառակը, ոչ միայն նորաստեղծ, այլ դարերով գոյություն ունեցող պետությունները ունեն սահմանային խնդիրներ, սակայն դրանք իմք չեն հանդիսանում պետություններին իրենց տարածքի հանդեպ ինքնիշխան իրավունքներից զրկելու համար: Աղքադանի Հանրապետությունը բոլոր ազգեւորներից իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով ստիպված էր ուսումնական գործողությունների մեջ մտնել Վրաստանի հետ՝ Զաքարալյանի, իսկ Հայաստանի հետ՝ Ղարաբաղի և Զանգեզուրի շրջանների համար: Այս տարածքները կազմում են Աղքադանի մաս և կառավարվում են Աղքադանի կառավարության կողմից: Ղարաբաղն ու Զանգեզուրը Աղքադանի ղեկավարությանն են հանձնվել Կովկասում Դաշնակիցների նախկին ներկայացուցիչների կողմից: Ամեն դեպքում, այս վեճերը վերաբերում են ոչ միայն Աղքադանին, այլ նաև հարևան երկրներին, ովքեր սկսել են վեճը: Սակայն Աղքադանի Հանրապետությունը մշտապես այն կարծիքին է եղել, որ հարևան Վրաստանի և Հայաստանի հետ սահմանային վեճերը պետությունների ներքին գործն են, և կառավարությունները պես է ճանապարհ գտնեն հարցը փոխադարձ զիջումներով լուծելու համար: Վիճելի հարցը փոխադարձ համաձայնությամբ չլուծելու դեպքում Աղքադանի պատվիրակությունը կասկած չունի, որ Անդրկովկասայան երեք հանրապետությունները կրիմնեն Ազգերի լիգային, ինչպես նշված է Ազգերի լիգային ուղղված իր քաղաքական հուշագրությունը (Աղքադանի Հանրապետություն, էջ 44), որը կնքվել է 1919 թ. սեպտեմբերին Խաղաղության Վեհաժողովում, ինչպես նաև Պատվիրակության հայտագրի յոթերորդ կետով, որը 1920 թ. նոյեմբերի 25-ին (N 697) ներկայացվել է Ազգերի լիգայի Գլավոր քարտուղարին՝ անդրադարձ կատարելով վերջինիս՝ Ազգերի լիգային Աղքադանի անդամակցությանը վերաբերող N 108 հուշագրին: Պատվիրակությունն իրավես հավատում է, որ չնայած Աղքադանին դեմ արտահայտվող խիստ ելույթներին, բնության կողմից առանձնաշնորհյալ այս երկիրը կվարողանա լիովին կատարել միջազգային բնույթի այն պարտականությունները, որոնք պարտավոր են կատարել Ազգերի Լիգայի անդամները ըստ հանձնայնագրի:

Աղքադանի պատվիրակությունը, կրկնակի անգամ Ռուս բոլշևիկների հարձակումներից տուժած իր երկրի շահերից ենելով, պատիվ ունի հայտարարելու Ազգերի լիգայի անդամ պետություններին, որ Աղքադանի անդամակցությունն Ազգերի լիգային կապահովի երկիրն այն բարոյական աջակցությամբ, որն անշափ անհրաժեշտ է

45 Մերժման առաջին իմքի վերաբերյալ բացատրությունները չենք թարգմանում, քանի որ այն դուրս է հողվածի խնդիրների շրջանակից:

մեր ժողովրդին Բոլշևիկների դեմ պայքարը շարունակելու համար - մի ժողովրդի, որը միայնակ, առանց որևէ արտաքին ուժի օգույքան ավելի քան վեց ամիս արյունալի պայքար է մղել Արքեթանի անկախությունը պահպանելու համար:

Հուսալով, որ բարոյական օգնության այս կոչը ուշադրության կարժանանա Վեհաժողովի մասնակից պատվիրակությունների ներկայացուցիչների կողմից, Արքեթանի պատվիրակության անունից խնդրում եմ բարի գտնվել և այս նամակը կարդալ Վեհաժողովում՝ Արքեթանի անդամակցության վերաբերյալ 5-րդ հանձնաժողովի վերոնշյալ եզրակացության քննարկման ժամանակ:

Ստորագրված Մ. Թոփշիբաշօվ (Alimardan Topchubashov)

Աղքեթանի Հանրապետության Խաղաղության պատվիրակության նախագահ

Ֆուտոպատճեն 3. Նատված 1920 թ. օգոստոսի 10-ի ԱՄՆ կառավարության՝ Վաշինգտոնում Խոտալիայի դեսպանին ուղղված նամակից, որը վերաբերում է Լեհական խնդրին և նախկին Ռուսական կայսրության տարածքների վրա ստեղծված նորանկախ պետությունների ծանաչմանը (LNA class. 11, doc. 7653, dos. 5343)

ACTION  
COPY  
EXTRACT FROM THE NOTE OF THE UNITED STATES GOVERNMENT  
TO THE ITALIAN AMBASSADOR IN WASHINGTON ON AUGUST 10/  
19120 AND DEALING WITH THE POLISH SITUATION.  
(from the "Washington Post," August 11, 1920).

7653

(This extract deals with the American attitude towards countries now claiming independence and formerly having formed part of the Russian Empire, Poland excepted).

AMERICA'S FAITH UNSHAKEN.

The United States maintains unimpaired its faith in the Russian people, in their high character and their future. That they will overcome the existing anarchy, suffering and destitution we do not entertain the slightest doubt. The distressing character of Russia's transition has many historical parallels, and the United States is confident that restored, free and united Russia will again take a leading place in the world, joining with the other free nations in upholding peace and orderly justice.

Until that time shall arrive the United States feels that friendship and honor require that Russia's interests must be generously protected and that, as far as possible, all decisions of vital importance to it, and especially those concerning its sovereignty over the territory of the former Russian empire, be held in abeyance. By this feeling of friendship and honorable obligation to the great nation whose brave and heroic self-sacrifice contributed so much to the successful termination of the war, the government of the United States was guided in its reply to the Lithuanian national council, on October 15, 1919, and in its persistent refusal to recognize the Baltic state as separate nations independent of Russia. The same spirit was manifested in the note of this Government, of March 24, 1920, in which it was stated, with reference to certain proposed settlements in the Near East, that "no final decision should or can be made without the consent of Russia."

OTHER RECOGNITIONS WITHHELD.

In line with these important declarations of policy, the United States withheld its approval from the decision of the supreme council at Paris recognizing the independence of the so-called republics of Georgia and Azerbaijan, and so instructed its representative in southern Russia, Rear Admiral Newton A. McCully.

\* \* \* \* \*

7653

(Այս նամակի սկիզբը պարզաբանում է Ամերիկայի վերաբերմունքն այն երկր-ների նկատմամբ, որոնք հավակնում են անկախ ճանաչվել և Ռուսաստանյան կայսրության մաս են կազմել, բացառյալ Լեհաստանը)<sup>46</sup>: Այնուհետև առկա է հետևյալ պաշտոնական գրությունը:

...

ԱՅԼ ԹԱՆՍՉՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՆ.

Այս կարևոր քաղաքական հայտարարությունների համատեքստում ԱՄՆ-ը դադարեցնում է Փարիզում Գերագույն խորհրդի՝ այսպես կոչված Վրաստանի և Ալբանիայի հանրապետությունների անկախությունը ճանաչելու որշման վերաբերյալ իր համաձայնությունը, ինչի մասին հայտնում է հարավային Ռուսաստանում իր ներկայացուցիչ՝ աղմիրալ Նյուտոն Ա. Սակկալիին:

“Վաշինգտոն փոստ” (“The Washington Post”) լրագիր, Օգոստոսի 11, 1920:

## Summary

### KARABAKH ISSUE AND AZERBAIJAN

In the archival documents of The League of Nations  
(Geneva, Switzerland)

Edita G. Gzoyan

The article deals with the issue of Karabakh within the framework of the admission of the Republic of Armenia and Azerbaijan to the League of Nations in 1920. It reveals the grounds on which the international organization has rejected the admission of the Republic of Azerbaijan, namely the non-sovereignty of the government and territorial

<sup>46</sup> Գրության առաջին հատվածը չենք թարգմանում, քանի որ այն դուրս է հոդվածի խնդիրների շրջանակից:

disputes with neighboring states. Although the modern historians and experts of Azerbaijan mention only the first argument as a basis for refusal, however the archival documents of the League of Nations reveal that the 5<sup>th</sup> Commission of the League of Nations dealing with the admission of new states clearly grounded its decision not to admit Azerbaijan also on the existence of territorial disputes with boarder states. Besides, the letter of the Azerbaijani delegation directed to the President of the First Assembly of the League of Nations, countering to the arguments raised in the decision on the Azerbaijani admission, also proves that the issue of territorial disputes with Armenia over the districts of Zangezur and Karabakh and with Georgia over the district of Zakatala had served as one of the basis for the rejection of admission.

The article also presented the photocopies of relevant documents.